


2878

616.9  
4-88

62

2896a



2002

2010

2896

ր. 6095

ԶԵՐ յաւելուած «ԱՆ ԱՊՀԱՎԱԿՐ ԲԵՐՔ»

ՏԻԳ. 9  
Ա-88

ՀԺԾԿԻ ԹԵՐԹԻԿՆԵՐ

ԺՈՂՈՎՐԴԻՑԻ ԿԱՐԴԱՐԱ ԽԱՐԴ

## ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Պէտք է կարդացանի եկեղեցիներում, խօսդի ձեւով կիրակի օրեր հրամագրակներում, տեղուու և ամեն տեղ, ուր ժողովուող է հաւաքու, կարգացալը պիտի տեղական բարձրու վերածի: Մեր տաճր միթիացն մի նմուշ է: համականեր զարժապետեր եւ բանիաց անձինն, որոնք կարգարու են, կառող են ուելի պարզել մերեր, բացուու մայր տեղերն օրինակներով ու հասկանալի ձեւերով: Կարդարաց յետ պիտի բաժանուի թշեկ, ընկ «Հանուն Խաչակեր Խոլերայի պատճանուելու համար» բերքիկներ: Յանձարի է, որ այս խօսքը եւ թէ թերքիկը բարզ-մասնեն տեղական բարձրու ներկ ու ցուեն:

## ՔԱՐՈՉ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Ամառը մօտենում է և նրա հետ էլ դուցէ զայիս է այն սարսափելի ցաւը, որը խոլերա են կոչում։

Ո՞վ չգիտէ թէ ինչ է խոլերան։ Նրա հէնց անունը զարգանդ է գցում մեր սրտերը։ Սա մի անոելի զազան է, մի անելքոյժ վիշտապ, որը լափում է մարդկանց, ւերանդու նման հնձում է ու հնձում, խլում է որդուն մօր գրկից, տապալում է հօրը, ո՞րբ թողնելով ընտանիքը, անխնա կոտորում է մեծերին ու փոքրերին, կանանց ու տղամարդկանց։ Ամեն տեղ մահ է տարածում այս անողորմ ճիւղը, երկիրը լցնում է լացով ու արտասուրով։

Մեզնից չատերը երկու խոլերա են տեսել։ Մէկն երևաց 1892 թւականին, միւսը հէնց անցեալ տարի։ Տասներկու տարի առաջ երևացող խոլերան աւերեց Բագուն ու երեանը, մտաւ շատ քաղաքներ ու դեղեր ու հնձեց անխնա տաս հազարներով մարդկի։ Սնցեալ տարւանն աւելի թեթև անցաւ, բայց էլի բաւականին զոհեր տարաւ։ Ասեմ ինչքան են հաշւում մերժապների թիւը 1992-ին։ Պարսկական գրականութեան աստանում և ուրիշ երեսնում։ Ասեմ չէ հաւատա, - 340 հազար հազարդացիւ, ու 160 հազար մեռել։



5384-56

Ահա թէ ինչ սարսափելի ցաւ է խոլերան։ 2էր վախենում, որ այս տարի էլ այդ ցաւը նորից գլուխ բարձրացնի։ Ի՞նչ կլինի այն ժամանակ մեր դրութիւնը։ Ի հարկէ. ամենքս էլ վախենում ենք։ Հիմք մի բան հարցնեմ ձեզ։ Ի՞նչ ենք անում, երբ մի բանից երկիւղ ունենք։ Օրինակ. գիտենք, որ գիւղում մի գայլ կամ կատաղած շուն է երևացել։ ինչ պիտի անենք։ Զէ որ պիտի վախչենք-մեր տոննը մտնենք ու դեռ դուռն էլ վակենք։ Բայց այդ վախկոտները կանեն, իսկ քաջ մարդիկ մի հրացան կը-վերցնեն ու կերթան-կսպանեն այդ կատաղած շանը կամ գայլին, որ գիւղին շվնասի։

Բայց մենք այդպէս շենք անում, երբ խոլերայի նման մի զազան է վրա տախս ու մեզ կոտորում։ Մենք ձեռներս ծալած «Աստծու յօյսով» ենք մառում։

Ինչի ենք այդպէս անում։ Որովհետեւ կարծում ենք, թէ խոլերան Աստծու պատիճն է։ Կատաղած գայլն Աստծու պատիճ շենք համարում ու դնում ենք սպանում, որ մեզ չկծի, իսկ խոլերան, որը զայլից էլ վնասակար է, Աստծու պատիճ ենք համարում ու ոչինչ շենք անում, որ կուենք նրա հետ։

Բայց, չէ որ մեղք էր անում, կարծելով, թէ Աստծու է զրկում մեզ ամեն տեսուկ ցամուն՝ ու անբախտառիւն։ Զէ որ խոլերան չի չոկում արդարն ու մեղաւորը, —նա, կոտորում է խեղճերին էլ, անմեղներին էլ, մանը երեխաներին էլ։ Զէ, Աստծած

չի դրկում խոլերան։ Եթէ զու գնաս քեզ զցես ջուրը, հօ չես ասի թէ նստած ջուրը ստեղծել է, որ մարդիկ գնան մէջը խեղդուեն։ Աշխարում հաղար տեսակ լաւ ու վատ բաներ կա, մենք պէտք է զգուշանանք վատից, վնասակարից։ Մի օրինակ բերեմ։ Մենք ամենքս էլ հողագործ ենք, զիտենք, որ ցորենի մէջ այնպիսի հատեր են բուսնում, որոնք թունաւորում են մարդի։ Միթէ պիտի ասենք, որ Աստւած մեզ պատժելու, մեզ թունաւորելու համար է ցորեն ստեղծել։

Պիտի թողնէք այդ սխալ կարծիքը։ Աշխարս լիքն է վտանգներով ու հրաշալիքներով, մեզ խելք ու բանականութիւն է տուած, որ ջոկենք վնասակարն օգտակարից և վնասակար բաներից հեռու պահենք մեզ, պաշտպանուենք նրանցից։ Ինչպէս պաշտպանում ենք ցրտից տուն շինելով ու շոր հագնելով, ինչպէս պաշտպանում ենք թունաւորուց ծուռ-խոտեր չուտելով, կամ կատաղած զայլից ու աւագակից, թշնամուց, որը մեզ սպանել է ուզում և աղն։ Խոլերան էլ մի թշնամի է, որը մեզ ուզում է կոտորել և մեր խելքն ասում է, որ մենք պարտաւոր ենք պաշտպանել մեր անձը ու մեր երեխաներին նրա ճանկերից։

Հիմի դուք ինձ կհարցնէք.

— Ի՞նչպէս պաշտպանենք մեզ այդ թըշնամուց, որին շենք տեսնում։ Կատաղած շանն ու զայլին տեսնում ենք, գողին-աւա-

գակին տեսնում ենք, բայց խոլերան որտեղ է, ինչ զիտենք, էլ ինչպիս զնանք-կուենք նրա հետ։

Մըրան ես կպատասխանեմ։

— Հէնց ցամ էլ նրա մէջն է, որ չենք տեսնում այդ թշնամուն, և նա իսկի տեսանելի բան էլ չէ, բայց էլի կարող ենք պաշտպանուել և փրկել մեզ։

Ահա ասեմ ինչպէս։

Ամենից առաջ զուք պէտք է լաւ հականաք և լաւ համոզուէք, որ խոլերան մի կպչողական, վարակիչ հիւանդութիւն է։ Ի՞նչ ասել է կպչողական, վարակիչ։ Կպչողական հիւանդութիւն ասում են այնպիսի ցաւին, որը մէկից միւսին է անցնում։ Ամենքդ զիտէք, որ այդպիսի հիւանդութիւններ մի քանիսը կան։ Օրինակ. ծաղիկը, ըկացաւը, կալմըրուկը։ Գիտէք որ, երբ մի տան մէջ երեխաներից մէկը կարմըրուկ կամ ըկացաւ կամ ծաղիկ է ունենում, տան միւս երեխաներն էլ հիւանդանում են նոյն ցաւով։ Այդ ամեննը էլ զիտէք։ Խոլերան էլ նոյն ձեռվ հիւանդից փոխում է առողջին, սրան էլ հիւանդացնում, յետո այդ նոր հիւանդացածը մի ուրիշին է հիւանդացնում և այսպէս ցաւը տարածում է տնից տուն, ու ամբողջ զիւղը շուտով վարակում է, այսինքն։ Կպչում այդ ցաւով։ Բայց լաւ իմացէք, որ խոլերան ամեն հիւանդութիւններից աւելի վարակիչ զօրութիւն ունի։ Այդ նշանակում է, որ այդ ցաւը շատ հեշտու-

թիւնով է փոխւում հիւանդից ուրիշներին։ Ահա մէկը խուերա է ստացել ու հիւանդ պառկած է։ Տեսնում ես, որ այդ տան մէջ մի ուրիշն էլ հիւանդացաւ, յետո մի երլորդը։ Դրացիներից մէկը գալիս է հիւանդատես և իր տունը դառնում, մէկ էլ տեսար, սա էլ հիւանդացաւ, ու խոլերան սրա տունն էլ ընկաւ։

— Ի՞նչ պատահեց, ինչից հիւանդացան այս մարդեկ, այն ինչ բան է, որը հիւանդի միջից գուրս եկաւ ու մտաւ այդ առողջ ների մէջ ու նրանց էլ հիւանդացրեց։ Ահա թէ ինչ պիտի լաւ հասկանանք։ Հիմի բացատրեմ ձեզ։

Ամեն հիւանդովթեան պատճառը մի թոյն է։ Ջատ տեսակ թոյներ կան, որոնք մտնում են մեր ներսը ու մեզ հիւանդացնում։ Օրինակ, ամենքը գիտէք, որ կան թունաւոր խոտեր, ովք ուտի-կհիւանդանա։ Դիտէք, որ սպիրոն էլ թոյն է, հաշիշն էլ թոյն է, մկնդեղն էլ թոյն է, օպիումն էլ թոյն է։

Խոլերան էլ մի տեսակ թունաւորում է։ Ովք խոլերա է ստացել, նշանակում է, որ թունաւորուած է։

Բայց պէտք է իմանաք, որ խոլերայի թոյնը հասարակ թոյների նման չէ։

Սա կենդանի բոյն է։ Այդ նշանակում է, որ այդ թոյնն, ընկնելով մեր ներսն անում է, շատանում։ Ինչ պէս որ մի հատ ճանճ կամ մի հատ ճանճ լու ա-

ճում է ու հաղարաւոր ճանճեր ու լուսեր է դառնում, այնպէս էլ խոլերայի թոյնը բազմանում է։ Այդ է պատճառը, որ նա կենդանի թոյն է կոչում։

Հիմի երևակայեցէք, որ զուք մի խոլերահիւանդի ձեռ տուիք. այդ հիւանդի ձեռի վրա այդ թոյնից մի չնչին մասնիկ (որ մենք չենք կարող աշբով տեսնել), կըպչում է ձեր ձեռին, դուք էլ, առանց լաւ մարենուու ձեր ձեռը հաց էք ուտում, հացի հետ էլ այդ թոյնի մասնիկն ենք կուլ տալիս։ Ի՞նչ կպատահի։ Այն որ թոյնը, ընկնելով ձեր ստամոքսը, կաճի կրազմանա, ու ստամոքսից կլցուի ձեր արեան մէջ, ու մի քանի ժամաւ մէջ մէկը բիւր կդառնա ու ձեզ կմեղդի-կթունաւորի։

Այդ թոյնն է հիւանդին խեղզողը. սպանողը։ Հիւանդի մարմինը լիրն է այդ թոյնով։ Հիւանդի փսխածի ու զուրս գնացածի մէջ անթիւ անհամար է նա։ Գիտնականները քննել են հիւանդների փսխածն ու զուրս գնացածը ու տեսել են, որ հինգ այդտեղ է թոյնի բունը։ Հիմի լաւ մտածէք ու կհասկանար, թէ որքան վտանգաւոր են խոլերա հիւանդից գուրս եկած ախտոտութիւնները։ Եթէ նրա կղկղանքը (զուրս գնացածը) թափուի, օրինակ, անկողնու վրա և սէկն այդ անկողնու վրա նստի կամ ձեռ տա, չէ որ թոյնից նրան կկպչի, կամ եթէ յատակի, կամ աթոռի վրա ընկած լինի չէ որ էլի այդ յատակի ու աթոռի վրա նստողին կկպչի,

և այն և այն։ Ամեն տեղ կարող է թափուել հիւանդի փսխածն ու կղկղանքը և ամեն բան կարող է փարակուել, և ով այդ բաների հետ գործ ունենա, ի հարկէ, կհիւանդանա։

Վերցնենք մի ուրիշ օրինակ էլ.

Դուք հիւանդի լուծածը կամ փսխածը տանում էք թափում ձեր տան դէմի առուն, չէ որ այդ զրի մէջ թոյնն էլի կամի-կշատանա և այդ զրից խմողը կթունաւորուի, կամ եթէ այդպիսի կեղտոտած (փարակուած) զրի մէջ մէկն իր շաբիկը լւանա ու հագնի, չէ որ այդ շաբիկ թոյնը կկազմի ու հագնողին կվարակի։ Կամ զուք տանում էք հիւանդի լուծածն ու փսխածը թափում զետնին, ձեր բակը կամ ձեր տան առաջ։ Զէ որ թոյնը կմնա զետնին, էլի կամի-կրազմանա։ Կամ խոլերա հիւանդի շորերը ու տեղաշորերը, հիւանդի մահից յետո, ուրիշն է զործածում, չէ որ նա էլ կհիւանդանա, բանի որ զբանց վրա խոլերայի թոյնը մնացած է։ Էլ չեմ ուզում երկարացնել։ Ուզում էի հասկացնել ձեզ, որ թոյնը հիւանդից զուք եկած աղտոտութիւնների մէջն է և զբանց միջով է տարածւում։

Ուրեմն վտանգը հիւանդի արտարօնումների մէջն է։ Եթէ նրա զուք գնացածն ու փսխածն առանձին ամանների մէջ հաւաքուի ու զուք տարուի-զետնի մէջ թաղուի, թոյնն էլ հետը կմեռնի և ուրիշներին չի փարակի։ Հիւանդի հետ նստել խօսելը, ո-

չինչ վնաս չի բերի մարդի, միայն թէ հիւանդը շատ մաքուը պահուի, նրա կեղտոտած բոլոր իրերը զուքս տարուեն սենեակից ու մաքրուեն։ Մի խօսքով. խօսերան օդի միջով չի անցնում, ինչպէս օրինակ ծաղիկը, հարինքը, կարմրուկը և այլն։

Հիմի ասենք, թէ մէկը ձեռ է տուել հիւանդի կեղտոտած մի բանի, ուրեմն այդ մարդը կորած է, նա սնպատճառ պիտի հիւանդանա։

Բոլորովին ոչ։ Բանն այն է, որ շատ էլ մեր ձեռների վրա խոլերայի թոյն է ընկել, շատ էլ մեր շորերը կնդտոտուած են, — այդ գեռ ոչինչ։ Մենք այն ժամանակ միայն կրհիւանդաննք, երբ այդ ձեռներով առանց լւացուելու հաջ ուտենք։ Անպատճառ պէտ է, որ այդ բոյնը մեր սամունքն ընկնի, որ հիւանդանանք։ Եթէ մենք մեր ձեռները լաւ մարքենք, եթէ մեր շորերը լաւ լւանանք, թոյնը վրաներիցս հանենք, առողջ կմնանք։

Այս բաննը լաւ պիտի հասկանանք։ Մենք կարող ենք հիւանդին խնամել, նրա մօտ նստել, բայց սենեակից զուքս զալիս պիտի մեզ լաւ մաքրենք։ մեր ձեռները, մեր երեսը, ու շորեներս էլ փոխենք։

Եթէ այդպէս չանչին բժիշկները, ֆելդշերները և առհասարակ հիւանդին խնամողները, հօ ամենքը կկոտորուէին, ինչպէս կոսորւում են միւս փարակիչ հիւանդութիւններից, որոնք օդի միջով էլ են անցնում, օրինակ. հարինքը, բծաւոր տիֆը և

երեխաների հիւանդութիւնները (քութէշը, բկացաւը, կարմըուկը, ծաղիկը): Ամենքն էլ զիտէք, որ խոլերա հիւանդին խնամողներն անպատճառ ամենքն էլ չեն հիւանդանում: Այդ բանը տեսնելով շատերը կարծում են, թէ խոլերան կպչողական-վարակիչ հիւանդութիւն չէ: Բայց դա սխալ է, նա սաստիկ վարակիչ է, միայն օդի միջով չի կարելի վարակուել: Այդ պիտի հասկանաք:

Մենք ասեցինք, որ եթէ դուք ձեր ձեռներն ու հագուստը և այլն լաւ լւանաք, չէք հիւանդանա, բայց հասարակ ջրով լւացնելը ու շորեր լւանալը չի մարդում թոյնից, չի հեռացնում թոյնը: Պէտք է դեղերով լանալ:

Կան դեղեր, որոնք սովանում են թոյնը: Այդ զեղերի մասին ես կլարդամ առանձին յետո, իսկ հիմի կասեմ, որ ձեր ձեռները, վարակուած շորերը ու հիւանդի հագուստը, սպիտակեղինը և ամեն բան պիտի այդ զեղաջրերով լւանալ որ թոյնը սպանուի: Մի լաւ միջոց էլ կա, — այդ եւցնելն է: Շորեղինը սպիտակեղինը և այն կցէք պղնձի մէջ վրան չուր կլցնէք սապոնի, սօղայի հետ ու լաւ կը եռցնէք մի ժամ, երկու ժամ: յետո կշորացնէք արևի կամ թոների մէջ:

Այդ բոլորը մէկ մէկ զբուած է թերթի մէջ որ կլարդամ ու կրածանեմ ձեղ, որ տանէք ձեր տները: Ինչպէս տեսնում էք, խոլերայից փըրկ-

ուելու համար հարկաւոր է մաքրութիւն: Եթէ ձեր տունն ու տեղը ձեր գիւղը ու ձեր անձը մաքուը չէք պահի, խոլերայի թոյնը կամի անդադար ու ամեն տեղ կլցնի և հիւանդութիւնը կտարածի եթէ ձեր տունը կեղտոտ է. ի հարկէ, ձեր ուտելիքն էլ, ձեր ջուրն էլ վարակուած կլինի և այդ ուտելիքըն ուտողն ու այդ ջուրը խմողն էլ կվարակուի-կհիւանդանա:

Աւրեմն մաքրութիւնը պէտք է: — Մաքրութիւն ձեր անձի, ձեր հագուստի, ձեր ձեռների: Մաքուը պիտի լինի ձեր ուտելիքըն ու խմելիքը, ձեր աման-շամանը լաւ իմացէք, որ խոլերայի թոյնը կեղտ է սիրում, կեղտոտ տեղերումն է աճում, կեղտի մէջ է զարգանում, իսկ մաքուը զիւղը, մաքուը տունը չի կարող նա մտնել և մաքուը մարդին դիպչել:

Գիւղացիներդ պիտի հաւաքուէք, մաքրէք ձեր փողոցները, մաքրէք ձեր աները: ոչ մի տեղ կեղտ մի թողէք, ամեն կեղտութիւն առաւօտները հաւաքէք, լցըէք քթոցների, արկղների մէջ, զրէք մի այլի վրա ու դուրս տարէք զիւղից զուրս, մի փոսի մէջ թաղէք, վրան էլ հաստ շերտ հող լցրէք:

Տների մէջ մեծ մաքրութիւն է հարկաւոր: Կահ-կարասիք, բռնջ ու պուճախ, փարաս տեղաշոր պիտի մաքուը պահուեն, ամեն օր սրբուին, լւացուին, մաքրուին: Կենդանիների կեղտերը, թթիքը պիտի իսկոյն

հաւարել, զուրս տանել զիւղից հեռու և  
էլի թաղել զետնի մէջ:

Մէկէլ պիտի լաւ հետեւք, իմանաք, հօ  
հարկան քաղաքում ու զիւղում խոլերա չկա:  
եթէ կա, պիտի կը կնապատկէք ձեր զգուշու-  
թիւնները: Այդ զիւղի հետ յարաբերութիւն-  
ները պիտի կտրէք, չզնաք-զաք, եթէ ստի-  
պողական զործ չունէք. այնտեղից եկող  
մարդկանցից էլ զգուշ եղէք: Ի հարկէ եթէ  
եկողն առողջ է, ոչինչ չունի, կարող էք  
հետք նստել խօսել, ձեր զործերը վերջաց-  
նել, բայց ձեր անկողնի մէջ մի քնեցլէք  
նրան, իսկ եթէ քնի էլ, նրա գնալուց յետո,  
նրա նստած տեղը մարդէք, լւացէք եռման  
ջրով, իսկ անկողինը, որի մէջ քնել է, նոյն-  
պէս զցէք ջրի մէջ ու եփ տուէք, նրա զործ-  
ածած ամանները, զրագը, նոյնպէս: Որքան  
էլ զժւար է ճիշտ կատարել ասածներս,  
այնուամենայնիւ պէտք է աշխատէք կատա-  
րել, որքան հնարաւոր է:

Յետո լաւ իմացէք, որ վարակուած զիւ-  
ղից ուտելեղին ու խմելեղին վերցնելը վը-  
տանդաւոր բան է: Մինչև անդամ եթէ ձեր  
խմած ջուրը (օր. առուն կամ զետը) վա-  
րակուած զիւղի միջով է անցնում, զուր  
այդ ջուրը չպիտի հում հում խմէք, այլ ան-  
պատճառ եփ տուէք սառեցրէք ու այնպէս  
գործ ածէք: Ինչի, որովհետեւ այդ ջրի մէջ  
կարող է խոլերայի թոյն զտնուել, և եթէ  
հում խմէք, այդ թոյնը կու կտաք ու կը-  
հիւանդանաք, բայց եթէ ջուրը լաւ եռցնէք,

թոյնը կոչնչանա ու կարող էք անվտանգ  
զործ ածել: Եթէ լաւ մաքուր աղբիւր կա  
զիւղից զուրս, կարող էք նրա չուրբ, ա-  
ռանց եփ տալու էլ զործածել, նոյնպէս  
պէտք է եռցնէք և կաթը: Մի խօսքով հում  
բան ոչ ուտէք, ոչ խմէք:

Նոյնպէս կաթի հետ պիտի վարուէք,  
եթէ ձեր կովից չէ, այլ վարակուած զիւ-  
ղից ու քաղաքից է զալիս.—Նոյնպէս լաւ  
եփ տուէք: Միրգն ևս վտանդաւոր է, ո-  
րովհետև վրան կարող է թոյն նստած (ճան-  
ճեր) լինել ու մրգի հետ մտնել ձեր ստա-  
մորսը: Եատ մրգեր կարելի է եփած զոր-  
ծածել, օրինակ. խնձորը, տանձը, սալորը,  
սերկելը, եփած միրգը համ անվտանգէ,  
համ էլ հեշտ է մարսում, իսկ խաղողը չի  
կարելի, ուրեմն խաղող չուտեն, ոչ կարելի  
է, միայն հարկաւոր է նրան լաւ լւանալ  
զեղերով ինչպէս ցոյց է տրուած թերթիկի  
վրա:

Քանի որ խօսում եմ ուտելիքի ու խմե-  
լիքի մասին, պիտի ասեմ և այն, որ շատե-  
րը զուով են իրանց հիւանդացնում, արբե-  
լով, աղահութիւն անելով: Պէտք է հիմիկ-  
ւանից թողէք արագ, զինին, չափաւոր ու-  
տէք, վնասակար բաներ զործ չածէք: Քէ-  
ֆերի ժամանակ չէ: Լաւ իմացէք, որ խմիչը-  
ներն ու քէֆերը մեր ստամորսը վշացնուա  
են, իսկ երբ մարսողութիւնը վատ է, հի-  
ւանդանալը հեշտ է դառնում: Առհասարակ  
մնունզը լաւ ու կանոնաւոր պիտի լինի:

Անսորներն աղքատների մասին պիտի հոգան, նրանց կերակրեն, նրանց բնակարանները և առհասարակ կենցաղը բարտոքեն: Եւ այդ պէտք է անեն, որպէս զիայդ խեղձերը չհիւանդանան, թէ չէ նրանը եթէ հիւանդանան, ունեորներն էլ չեն ազատուի, կվարակուեն: Առանձին ուշաղրութիւն պիտի դարձնէր արտաքնօցների վրա: Ճատ տներում զիւղերում արտաքնոց չկա, և մարդիկ փողոցները կեղատուում են: Գա շափաղանց վտանգաւոր բան է: Պիտի հորեր փորէր:

Արտաքնոցներն ախտահանելու (այսինքն մաքրելու) համար պէտք է օքը մի բանի անդամ վրան կիր կամ կրի կաթ լցնել:

Ամեն զիւղում պիտի չհանգրած (անչէջ) կրի պահեստ ունենաֆ: Կիր աման տեղ կա, և ամենից ձեռնտու ախտահանիչ միշոցն է: Կիր կարող էք ածել ձեր յատակի վրա, եթէ հիւանդի արտաթօրութիւններ են թափել, կարող էք կրակաթ շինել ու շաղտալ ամեն տեղ, որտեղ կասկածում էք թէ խոլերայի թոյն է ընկած:

Սիրելի ժողովութիւն: Երբ ժողովրդի զիմին մի ցատում է զալիս, նա չպիտի խընայի իր կոպէկներն իրան փրկելու համար: Այս պատճառուի է զիւղացիք պիտի աշխատեն մի փելգշեր ունենալ իրանց զիւղում հնաց հիմիկուց: Փելգշերը, ի հարկէ, թժիշկա չէ, բայց էլի նա հասկանում է թէ ինչպէս պէտք է պաշտպանուել խոլերայից և հիւանդներին էլ կօգնի, մէկէլ էժան է.—ամ-

սական մի 50 ոռւբիով կարելի է մի ֆելգշեր պահել: Եթէ մի քանի հարևան գիւղեր հաւաքուեն, կալող են մի բժիշկ էլ պահել: Եկէր մեր զրացի կիւղերի հետ խօսենք ու այդ բանը զլուկ բնընք: Ունեորները թող միքիշ շատ տան, աղքատները քիչ կամ ոչինչ: Ունեորները պիտի հասկանան, որ պիտի օդնեն իրանց խեղճ համազիւղացիներին, և այդպիսով արգելին, որ խոլերան տարածուի զիւղում: Թէ չէ, եթէ աղքատները հիւանդանան, իրանք էլ չեն պըծնի: Ով իր զիւղի մասին է հոգում, իր մասին է հոգաւմ:

Բացի ասածներս, պէտք է զիւղում մի փոքրիկ դեղատուն էլ ունենար:

Դեղատունը պիտի կազմի բժիշկը, թող մէկը զնա քաղաք ու բժշկին խնդրի (կամ զիւղական բժշկին), որ այդ զեղերը զրի զեղատունից առնելու համար: Կամ զիւղական բուժարանից բժիշկը պէտք է առանձին զրի նաև մանրամասն, թէ ինչպէս և երբ պիտի գործածել այդ զեղերը: Նիբերէք զիւղը, քանանան կամ վարժապետը կկարգա ու ձեզ կհասկացնի: Այդ զեղերի անունն էլ այս թերթի մէջ կան:

Յնտո պիտի զգուշանաք զանագան պառաւներից ու զըրացներից ու մօլաներից: Նրանք չեն հասկանում հիւանդութիւնը և ի հարկէ չեն էլ հասկանա թէ ինչպէս է հարկաւոր բժշկուել: Ճատ զեղեր են տալիս նրանք, բայց ոչ մէկն օպուտ չէ, այլ

վնաս է: Ասում են սխտորը պահպանում է մարդուն խոլերայից, բայց իմացէք, որ ընդհակառակը շատ վնաս է:

Միևնույն ժամանակ պէտք է լսէք բը-  
ժիշկների տուած խորհրդներին, որոնք ինչ  
ասում են ձեր օգտի համար են ասում:

Այս միւս թերթիկի մէջ դուք կզտնէք  
շատ ուրիշ խրատներ, ուրեմն կարդացէք  
ուշաղրութեամբ ու հետևեցէք:

Հիմի դուք հասկացաք, թէ ինչ է խո-  
լերա կոչուած դազանը: Երբ որ մենք ճա-  
նաշում ենք թշնամուն, կարող ենք և պաշտ-  
պանուել նրանից: Ձեզնից է կախուած ձեր  
փրկութիւնը, լաւ միտներդ պահէք ինչ որ  
ասացի ու խոլերան չի մտնի մեր գիւղը,  
իսկ եթէ մտնի էլ—շատ վնաս չի տա:

Ամեն չարիքի դէմ պիտի կուել, խո-  
լերան էլ մի չարիք է:

Աւրեմն հաւաքենք մեր ուժերը, միա-  
նանք, իրար օգնենք, որ կարողանանք լաւ  
կուել ու յաղթել:

5384-58

Дозволено цензурой Государственной Типографии г. Тифлисъ.



20m

Մ.Ժ

2878

Հ013

«Ազգային գրադարան»



NL0074813

